

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Բնական գիտություններ

1, 2008

Естественные науки

Ցիցիալ

УДК 577.3

Գ. Լ. ՔԱՆԱՐՅԱՆ

**ԴՆԹ-Ի ԶՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՎՐԱ ՑԱՅԾՐ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ
ՍԻԼԻՍՏԵՏՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՍՍՎԱԳՆԻՍԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐԻ
ԱՉԴԵՑՈՒՅԹՅԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԼՍԱՆ
ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԿՈՐԵՐԻ ՄԻՋՈՅՑՈՎ**

Հայտնի է, որ ջրի մոլեկուլային կառուցվածքների սեփական տատանումների հաճախություններով (64,5 և 50,3 գՀց) ԴՆԹ-ի ջուր-աղային լուծույթները ճառագայթելիս փոխվում է ջրի կառուցվածքը, որի հետևանքով ԴՆԹ-ի ջերմակայունությունը աճում է $\sim 1^{\circ}\text{C}$ չափով, իսկ հալման միջակայքը փորձի սխալի սահմաններում փորբանում է [1]: Միաժամանակ ցույց է տրված, որ ԴՆԹ-ի հալման դիֆերենցիալ կորերի ($\Delta\text{Τ}$) առաջին և երկրորդ կենտրոնական մոմենտների օգնությամբ կարելի մեծ ճշտությամբ որոշել ԴՆԹ-ի հալման պրոցեսը բնութագրող պարամետրերը (հալման ջերմաստիճանը՝ T_h և միջակայքը՝ ΔT) [2]: Հետևաբար, ունենալով 64,5 գՀց հաճախությամբ ճառագայթված ԴՆԹ-ի $\Delta\text{Τ}$ -երը, կարելի է հաշվել նրանց առաջին և երկրորդ կենտրոնական մոմենտները և ավելի մեծ ճշտությամբ որոշել ԴՆԹ-ի հալման պարամետրերի փոփոխության վարքը ճառագայթման հետևանքով:

Հետազոտության մեթոդիկան: Օգտագործվել է հորդի ուրցագեղձի ԴՆԹ (*«Sigma»*, ԱՄՆ): Պատրաստվել է ԴՆԹ-ի լուծույթ 0,1SSC բուժերում, pH 7,2 (1SSC=0,15 M NaCl+0,015 M Na-ի ցիտրատ): Նմուշների ճառագայթումը մանրամասն նկարագրված է [3] աշխատանքում:

ԴՆԹ-ի հալման կորերը ստացվել են UNICAM SP 8–100 սպեկտրոֆուտոմետրի միջոցով [1, 3]: $\Delta\text{Τ}$ -երի ստացումը և դրանց գառայան բաղադրիչների գումարի տեսքով ներկայացնումը մանրամասն նկարագրված է [2] աշխատանքում:

Ստացված արդյունքները և քննարկումը: Չափման համար պատրաստված ԴՆԹ-ի ջրային լուծույթները ճառագայթվել են 64,5 գՀց հաճախությամբ էլեկտրամագնիսական ալիքներով, սենյակային ջերմաստիճանում 30, 40, 60, 90 և 120 րոպե տևողությամբ: Ստացվել են չճառագայթված և ճառագայթված ԴՆԹ-ի հալման կորերը, որոնցից անցում է կատարվել $\Delta\text{Τ}$ -երին: Նրանց առաջին (M_1) և երկրորդ (M_2) կենտրոնական մոմենտները կարելի է հաշվել հետևյալ բանաձևերով [2].

$$M_1 = \sum_{i=1}^n S_i T_i , \quad (1)$$

$$M_2 = \sum_{i=1}^n \sigma_i^2 S_i + \sum_{i=1}^n T_i^2 S_i - M_1^2, \quad (2)$$

որտեղ S_i, σ_i, T_i -ն համապատասխանաբար i -րդ զառայան բաղադրիչի մակերեսն է, միջին քառակուսային լայնությունը և ջերմաստիճանային առանցքի վրա նրա դիրքը: M_2 -ի միջոցով կարելի է հաշվել Γ ՆԹ-ի հալման ΔT միջակայքը.

$$\Delta T = \sqrt{2\pi M_2} : \quad (3)$$

Նշենք, որ M_1 -ը հանդիսանում է նոյն T_h պարամետրը: Հետևաբար, ունենալով ճառագայթված և ճառագայթված Γ ՆԹ-ների ζ ԴԿ-երը, զառայան վերլուծության միջոցով կարելի է հաշվել S_i, σ_i և T_i պարամետրերի արժեքները, հաշվել M_1 և M_2 մեծությունները, այնուհետև՝ T_h և ΔT -ն (1) և (3) բանաձևերով [2]:

Հայտնի է, որ Γ ՆԹ-ի ζ ԴԿ-երը կարելի է վերլուծել տարրեր թվով զառայան բաղադրիչների, սակայն հաշվումները ցույց են տվել է [4], որ Γ ՆԹ մոլեկուլի ֆիզիկարիմիական բնութագրերի արժեքները կախված չեն զառայան բաղադրիչների վերլուծության եղանակից և նրանց թվաքանակից: Քանի որ հորթի ուրցագեղձի Γ ՆԹ-ի ζ ԴԿ-երը միշտ ներկայացվում են 5 զառայան բաղադրիչների տեսքով և վերլուծվում են միայն մի եղանակով, ապա ներ ուստիմնասիրությունների համար ընտրել ենք հատկապես այդ Γ ՆԹ-ն: Այսուսակում բերված են 64,5 ԳՀ հաճախությամբ ցածր ինտենսիվության միլիմետրային էլեկտրամագնիսական (ՍԵՄ) ալիքներով ճառագայթված հորթի ուրցագեղձի Γ ՆԹ-ի ζ ԴԿ-երից (1)–(3) բանաձևերով հաշվարկված T_h և ΔT պարամետրերի արժեքները՝ կախված ճառագայթման տևողությունից:

| Ճառագայթման տևողությունը (րոպե) | $T_h, {}^\circ C$ | $\Delta T, {}^\circ C$ |
|------------------------------------|-------------------|------------------------|
| 0 | $72,01 \pm 0,05$ | $10,13 \pm 0,05$ |
| 30 | $72,18 \pm 0,05$ | $10,08 \pm 0,06$ |
| 40 | $72,46 \pm 0,05$ | $10,02 \pm 0,05$ |
| 60 | $72,75 \pm 0,06$ | $9,88 \pm 0,06$ |
| 90 | $73,05 \pm 0,06$ | $9,80 \pm 0,05$ |
| 120 | $73,18 \pm 0,05$ | $9,78 \pm 0,06$ |

Ինչպես երևում է աղյուսակից, ճառագայթման տևողությունից կախված դիտվում է T_h հալման ջերմաստիճանի աճ $\sim 1,2^\circ C$ -ով: Միաժամանակ՝ ΔT հալման միջակայքը նվազում է $0,35^\circ C$ չափով, որը դուրս է փորձի սխալի սահմաններից:

64,5 ԳՀ հաճախությամբ Γ ՆԹ-ի լուծույթը ճառագայթելիս Γ ՆԹ-ի ջերմակայունությունը աճում է, սակայն քանի որ ΔT -ն փոքրանում է, կարելի է ենթադրել, որ ΔT իմքերի զույգերը ավելի շատ են կայունանում, քան GC զույգերը: Հայտնի է, որ Γ ՆԹ-ի ուղղութանային կլանման հաճախությունները 2–9 ԳՀ տիրույթում են [5], հետևաբար, Γ ՆԹ-ի լուծույթը 64,5 ԳՀ հաճախությամբ ճառագայթելիս նրա ջերմակայունության աճը կարելի է բացատրել ջրի կառուցվածքի փոփոխությամբ [1, 3], որի հետևանքով էլ փոփոխություն է կրում Γ ՆԹ-ի կառուցվածքը: Ամենայն հավանականությամբ, ՍԵՄ ալիքների ազդեցության ներքո փոքրանում է ջրում լուծված իոնների

(հիմնականում՝ Na^+ -ի) և TiO_2 -ի հետ կապված ջրի մոլեկուլների թիվը կատարվում է ապահովատացում: Այդ պատճառով $\text{Na}-\text{i}$ իոնները ավելի էֆեկտիվ են էկրանավորում բացասական լիցքավորված ֆունֆորային խմբերը, որի հետևանքով էլ աճում է TiO_2 -ի հալման ջերմաստիճանը: Իոններից և ազոտային հիմքերի գույգերից պոկված ջրի մոլեկուլները հիմնականում տեղափորփում են ջրի հեքսագոնալ կառուցվածքի «դատարկ» մասերում [6], ուստի, ամենայն հավանականությամբ, մեծանում է ջրա-աղային լուծույթի խտությունը, ինչը և դիտվել է մեր կողմից [7]:

Հայտնի է [8], որ TiO_2 -ի AT գույգերի հետ կապված ջրի մոլեկուլների թիվը $\sim 2,3$ մոլեկուլներով ավելի է GC գույգերի հետ կապված ջրի մոլեկուլների թիվը: Հաշվումները ևս հաստատում են, որ TiO_2 -ի հետ կապված ջուրը որոշակի փոփոխություն է կրում ջրի հեքսագոնալ կառուցվածքի տատանումների ռեզոնանսային 64,5 kHz հաճախությամբ ճառագայթելիս, որի հետևանքով էլ TiO_2 -ի մոլեկուլը կայունանում է հիմնականում ավելի հիդրատացված AT-հարուստ տեղամասերի հաշվին:

Մոլեկուլային ֆիզիկայի ամրիոն

Ստացվել է 09.10.2007

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. **Бабаян Ю.С., Маркарян А.Ш., Калантарян В.П., Казарян Р.С., Парсаданян М.А., Варdevanyan P.O.** – Биофизика, 2007, т. 52, № 2, с. 382–384.
2. **Бабаян Ю.С., Акопян С.Н., Маркарян А.Ш., Казарян Р.С., Оганесян А.А.** – Вестник МАНЭБ, 2005, т. 10, № 5, с. 180–183.
3. **Քարայան Յու.Ս., Քալամբարյան Վ.Պ., Հակոբյան Ա.Ն., Սեգոյան Հ.Ե., Մարգարյան Ա.Ը.** – ԵՊՀ Գյուղական տեղեկագիր, 2005, № 2, էջ 142–143.
4. **Ахрем А.А., Асланян В.М., Бабаян Ю.С., Ландо Д.Ю.** – Доклады АН БССР, 1980, т. 24, № 3, с. 264–267.
5. **Илларионов В.Е.** Медицинские информационно-волновые технологии. М.: ВЦМК «Зашита», 1998.
6. **Высоцкий В.И., Корнилова А.А.** – Вестник Моск. универ., серия 3, Физика, 2004, № 3, с. 58–62.
7. **Бабаян Ю.С., Акопян С.Н., Казарян Р.С., Калантарян В.П., Симонян Г.С., Хачатрян А.Б., Антонян А.П., Варdevanyan P.O.** – Биомедицинские технологии и радиоэлектроника, 2006, № 11, с. 64–68.
8. **Tikhomirova A., Chalikian T.** – J. Mol. Biol., 2004, v. 341, p. 551–563.

Г. Л. КАНАРЯН

ИССЛЕДОВАНИЕ ВЛИЯНИЯ НИЗКОИНТЕНСИВНЫХ МИЛЛИМЕТРОВЫХ ЭЛЕКТРОМАГНИТНЫХ ВОЛН НА ВОДНЫЕ РАСТВОРЫ ДНК ПРИ ПОМОЩИ ДИФФЕРЕНЦИАЛЬНЫХ КРИВЫХ ПЛАВЛЕНИЯ

Резюме

При помощи дифференциальных кривых плавления вычислены параметры плавления ДНК: температура ($T_{\text{пл}}$) и интервал плавления (ΔT).

Показано, что при облучении растворов ДНК электромагнитными волнами с частотой $64,5 \text{ ГГц}$ $T_{\text{пл}}$ увеличивается на $\sim 1,2^{\circ}\text{C}$, а ΔT уменьшается на $0,35^{\circ}\text{C}$.

G. L. KANARYAN

INVESTIGATION OF THE INFLUENCE OF LOW INTENSITY MM
ELECTROMAGNETIC WAVES ON DNA WATER SOLUTION BY
DENATURATION DIFFERENTIAL CURVES

Summary

The parametres of DNA denaturation, the temperature of DNA denaturation (T_m) and its interval (ΔT) has been calculated by denaturation differential curves. It was shown that during the radiation of DNA solution by the frequency of 64.5 GHz the temperature of DNA denaturation (T_m) increases by $1,2^{\circ}\text{C}$ and its interval (ΔT) decreases by $0,35^{\circ}\text{C}$.